Ծրագիր

2008 թվականին Գերմանիայի Դաշնային Հանրապետության **Արտաքին գործերի նախարարությունը** գործի դրեց «Ապագայի գործընկեր-դպրոցներ» (PASH) նախաձեռնությունը, որի նպատակն էր արտերկրում դպրոցների հետ համագործակցության ակտիվացումը և համապատասխան երկրներում գերմաներենը՝ որպես օտար լեզու, ուսումնական ծրագրերի անբաժանելի մաս դարձնելը: **Ակադեմիական փոխանակումների գերմանական ծառայության** (DAAD) կողմից կազմակերպված՝ «Գերմանական՝ արտասահմանյան և գործընկեր դպրոցներին աջակցելու ծրագիրը»-ը (BIDS) հանդիսանում է PASH նախաձեռնության անբաժանելի մասը:

BIDS ծրագիրը ամրապնդում է բուհերի համագործակցությունը արտերկրում գերմանական և լեզվի դիպլոմային դպրոցների հետ: DAAD-ն նաև աջակցում է մեր BIDS նախագծը բուհական ցանցում:

Այդ շրջանակներում «**Վիադրինա» Եվրոպական համալսարանը** համագործակցում է արտասահմանյան և լեզվի դիպլոմային դպրոցների հետ մասնավորապես Հայաստանում, Բուլղարիայում, Լեհաստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում:

Բրանդենբուրգի տեխնիկական համալսարանը (ԲՏՀ) ավելի սերտ է համագործակցում Բուլղարիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Չեխիայի և Թուրքիայի PASH-դպրոցների հետ:

Ինչու՞ է BIDS-ը քեզ համար հետաքրքիր

- ✓ **Դու դեռ չգիտե՞ս, թե՝**
  - ➢ **Որտե՞ղ ես ցանկանում սկսել ուսումդ,**
  - ➢ **Ի՞նչ ես ուզում ուսումնասիրել:**

  Մենք օգնում ենք քեզ կողմնորոշվել և խրախուսում ենք Բրանդենբուրգում սովորելու քո որոշումը:
- ✓ **Քեզ անհրաժե՞շտ է աջակցություն քո ուսման մեկ-նարկի համար:**

  Մենք քո կողքին ենք մեր խորհրդատվական և աջակցության ծառայություններով:
- ✓ **Քեզ անհրաժե՞շտ է ֆինանսական աջակցություն:**

  Դիմի՛ր մեր մոտիվացիոն կրթաթոշակի համար:

Տեղեկատվություն

«Վիադրինա» Եվրոպական համալսարան

Կոնտակտային անձ՝

Maria Krug-Firstbrook

BIDS նախագծի համակարգող՝

bids@europa-uni.de

Große Scharrnstraße 59

15230 Frankfurt (Oder)

Բրանդենբուրգի տեխնիկական համալսարան

Կոտբուս – Զենֆտենբերգ

Կոնտակտային անձիք՝

Anke Meissner

Միջազգային շրջանավարտների հավաքագրման և նրանց հետ աշխատանքի գծով խորհրդատու

anke.meissner@b-tu.de

Barbara Bech

BIDS-ի նախագծային օգնական՝

barbara.bech@b-tu.de

Platz der Deutschen Einheit 1

03046 Cottbus

2022թ. Նոյեմբերի դրությամբ

BB-BIDS

Աջակցության նախաձեռնություն Գերմանական արտերկրյա դպրոցներ և գործընկեր դպրոցներ

Վիադրինա և ԲՏՀ

EUROPA-UNIVERSITÄT VIADRINA FRANKFURT (ODER)

DAAD Deutscher Akademischer Austauschdienst German Academic Exchange Service

b-tu Brandenburgische Technische Universität Cottbus - Senftenberg

Համալսարաններ

Ֆրանկֆուրտի (Օդեր) «Վիադրինա» Եվրոպական համալսարանը գերմանա-լեհական սահմանին, իր 6500 ուսանողներին առաջարկում է միջառարկայական շրջանակ մշակութաբանության, տնտեսագիտության և իրավունքի ոլորտներում:

Կարճ դասընթացները, ժամանակակից պայմաններում մեծ ներդրում ունեն ուսման հաջողության գործում: Համալսարանի միջազգային ուղղվածությունը իր օտար լեզուների դասընթացների լայն առաջարկով և երկու կամ երեք պետական որակավորման հնարավորությամբ, ամեն տարի դեպի Օդեր է գրավում գերմանիայից և արտերկրից բազմաթիվ ուսանողների:

©Heide Fest

Բրանդենբուրգի Կոտբուս-Զենֆտենբերգի տեխնիկական համալսա- րանը ժամանակակից, միջազգային մակարդակի ուղղվածության տեխնիկական համալսարան է, որը բացի դասընթացների լայն շրջանակից մեծ տեղ է հատկացնում նաև ձեր սեփական գաղափարներին:

ԲՏՀ-ի կողմից առաջարկվող դասընթացները ներառում են բնական և տեխնիկական գիտությունները, ինչպես նաև տնտեսագիտություն, մշակութաբանություն և բժշկական գիտություններ: Նորագույն տեխնիկական սարքավորումնե- րի և գերազանց աջակցության շնորհիվ մենք երաշխավորում ենք ապագային միտված ուսուցում:

Մեր օտարերկրյա ուսանողները օգտվում են մի շարք նախա- պատրաստական ծրագրերից, լեզուների ուսուցման և բազ- մաթիվ ժամանցային հնարավորություններից:

©Ralf Schuster

©Rene Matschkowiak

BIDS Փորձնական ուսուցում

Մենք ոչ միայն այցելում ենք մեր գործընկեր դպրոցներ և այնտեղ ներկայացնում մեր համալսարանները, այլ նաև տարին մեկ անգամ ուսանողներին հրավիրում ենք Կոտբուս և Օդերի Ֆրանկֆուրտ, որպեսզի նրանք ան- ձամբ կարողանան ծանոթանալ **ԲՏՀ-ին և Վիադրինային:**

2008 թվականից սկսած ամեն տարի մենք հաճույքով ընդունում ենք **PASH դպրոցների** վերջին դասարանների աշակերտներին: Բազմաբնույթ նախնական շաբաթվա ընթացքում դպրոցի ապագա շրջանավարտները հնարա- վորություն են ունենում անձամբ վերապրել մեր համալ- սարանի առօրյան և հենց տեղում ծանոթանալ ԲՏՀ-ի և Վիադրինայի կողմից առաջարկվող բազմատեսակ դասընթացներին:

Աշակերտներին մենք առաջարկում ենք հետևյալ հնարա- վորությունները.

- Ծանոթանալ համալսարանի կամպուսին, ծանոթա- նալ Կոտբուս և Սենֆտենբերգ, Օդերի Ֆրանկֆուրտ և Սլուբիցե քաղաքներին, ինչպես նաև դրանց շրջակայ- քին,
- ծանոթանալ մեր դասընթացների լայն շրջանակին,
- հաճախել ակադեմիական դասընթացների,
- հանդիպել ուսանողներին,
- Վիադրինայի Միջազգային տոնին հանդիպել աշխար- հի տարբեր երկրներից ժամանած ուսանողների հետ,
- մասնակցել միջմշակութային սեմինարների և գրողների վարպետաց դասերին,
- մասնակցել էքսկուրսիաների տարբեր տեսարժան վայրերում՝ հատկապես Բեռլինում:

Լրացուցիչ տեղեկությունների, հատկապես **դիմումի** վե- րաբերյալ մանրամասները կարող եք գտնել մեր կայքե- րում՝ Վիադրինա / ԲՏՀ:

BIDS Մոտիվացիոն կրթաթոշակ

Արժե ուսում ստանալ հենց Բրանդենբուրգում: Որպեսզի հեշտացնենք PASCH-շրջանավարտների ուսման մեկնարկը մեր համալսարաններում, մենք կցանկանայինք աջակցել նրանց հենց ուսման սկզբում:
Այդ նպատակով **ԲՏՀ**-ն և **Վիադրինան** կրթաթոշակներ են տրամադրում օտարերկրյա PASCH դպրոցների բարձր առաջադիմությամբ և նպատակասլաց շրջանավարտներին:

Կարճ տեղեկատվություն մոտիվացիոն կրթաթոշակի մասին.

- Դրամաշնորհի գումարը՝ ամսական 400 եվրո,
- Դրամաշնորհի ժամկետը՝ 1-ին կիսամյակ, հնարավոր է երկարացում,
- Դիմումի մասին բոլոր տեղեկությունները՝ ԲՏՀ-ի և Վիադրինայի կայքերում:

Կրթաթոշակները ֆինանսավորվում են Ակադեմիական փոխանակումների գերմանական ծառայության (DAAD) և Դաշնային արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Խորհրդատվություն և աջակցություն

«Վիադրինա» Եվրոպական համալսարանի և Կոտբուս-Զենֆտենբերգի ԲՏՀ-ի մասին լայնածավալ տեղեկատվություն տրամադրելու համար մենք այցելում ենք դպրոցներ և ներ- կայացնում մեր համալսարանները: Բացի դրանից մենք ներկայացված ենք տարբեր **կրթական տոնավաճառներում**, որտեղ դուք կարող եք անձամբ հանդիպել մեզ և տալ ԲՏՀ-ում և «Վիադրինայում»սովորելու վերաբերյալ ձեր հարցերը:
Մենք նաև ուրախ ենք ցանկացած պահի աջակցել դպրոցական պարապմունքներին կամ տեղեկատվական նյութեր տրամադրել դպրոցներին:

Մենք օգնում ենք արտասահմանում գործող գերմանական ինչպես նաև լեզուների դիպլոմային դպրոցների աշակերտներին, տարբեր դասընթացների, դիմումների, կրթաթոշակների և այլնի վերաբերյալ բոլոր հարցերում ինչպես նաև ինտենսիվորեն աջակցում ենք օտարերկրյա ուսանողներին, իրենց ուսման ընթացքում:

©Maria Krug-Firstbrook